ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/125

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Ա. Պարանյանի (լիազորագիր՝ տրված 17.05.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.05.2021թ. թիվ 26/26-1/7398-2021 գրությամբ «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 06.05.2021թ. թիվ ՊՆ/02/2440-2021 գրության հիման վրա 11.05.2021թ. թիվ 26/26-1/7398-2021 գրությամբ նախաձեռնել է «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/125 ընթացակարգի շրջանակներում 18.05.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 2 աշխատանքային օրով հետաձգել նիստը՝ հնարավորություն տալով Ընկերությանը նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնելու դիրքորոշում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բավարարվել է վերջինիս միջնորդությունը և տրամադրվել է 2 աշխատանքային օր ժամանակ գրավոր դիրքորոշում ներկայացնելու համար:

«ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 21.05.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/5» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ը /12-րդ չափաբաժին/ ապրանքի ամբողջական նկարագիրը, սահմանվել է հետևյալը.

Uni-ball UB-200/08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք /կցվում է/:

«Միարմա Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում ներկայացված 12-րդ չափաբաժինների մասով նշվել է՝ Uni-ball UB-000(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2021թ. տեղի նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետով արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես. «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում ներկայացված 12-րդ չափաբաժինների մասով նշվել է՝ Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք, որը չի հստակեցնում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին...:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Իսկ արդեն նույն թիվ 3 արձանագրության 2.4 կետի համաձայն՝ «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատաախանությունը՝ ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվորատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2 մայիսի 2019 թվականի 516-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ. ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված

անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/5» ծածկագրով գնման ընթացակարգին:
Ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ը /12-րդ չափաբաժին/ ապրանքի ամբողջական նկարագիրը, սահմանվել է հետևյալը՝ Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք:

«ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում ներկայացված 12-րդ չափաբաժինների մասով նշվել է՝ Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետով արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում ներկայացված 12-րդ չափաբաժինների մասով նշվել է՝ Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք, որը չի հստակեցնում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին...:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունը համար:

Իսկ արդեն նույն թիվ 3 արձանագրության 2.4 կետի համաձայն Ընկերությունը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

«ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2021/105 ընթացակարգի հիմքերը քննելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

Բողոքներ քննող անձին խնդրում են նկատի ունենալ, որ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատող հանձնաժողովի 27.04.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ պարզ է դառնում, որ

գնահատող հանձնաժողովը ընդհանրապես չի արձանագրել անհամապատասխանություն. այլ ընդամենը վերացական նշել է, որ ներկայացված Հավելված 1.1-ը չի հստակեցնում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մինչեռ ներկայացված տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ արտացոլում է Հրավերի պայմանները:

Այսինքն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ը /12-րդ չափաբաժին/ ապրանքի ամբողջական նկարագրով սահմանվել է հետևյալը՝ Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք: «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում ներկայացվել է 12-րդ չափաբաժնի մասով նշվել է՝ նույն Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք, արդյունքում՝ հանձնաժողովը որոշել է, որ Հրավերի հետ նույնատիպ ներկայացված Հավելված 1.1-ը չի հստակեցնում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին (բայց ինչով) և տրամադրել անհամապատասխանությունների շտկում:

Գտնում ենք, որ նման պայմաններում արձանագրելով, որ ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին, և միևնույն ժամանակ հստակ չնշելով. թե ինչով չի համապատասխանում, գնահատող հանձնաժողովը մի կողմից խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, իսկ մյուս կողմից Կարգի 41 և 43 կետի պահանջները:

Արդյունքում նման ոչ իրավաչափ գործողությունները հանգեցրել են ոչ միայն «Միարմա Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելուն, այլ նաև տարիների փորձ ունեցող ընկերությանը կանգնեցրել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.05.2021թ. թիվ ՊՆ/02/2440-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/5» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից):

Մասնակցի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում 12-րդ չափաբաժնի գնման առարկայի մասով ներկայացվել են ոչ հստակ տեխնիկական բնութագրեր, մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերի 12-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է՝ «Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք» տեղեկատվությունը: Տեղեկատվության մեջ համարժեքության դրույթը ներառված է տվյալ բնութագրերի նմանատիպ (համարժեք) բնութագրեր ներկայացնելու հնարավորության համար: Մասնակիցը ներկայացրել է նույն՝ «Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք» տեղեկատվությունը, որով չի հստակեցրել ներկայացվող ապրանքի բնութագիրը: Տեղեկատվությունն անհրաժեշտ էր հստակեցնել՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը, կամ անհրաժեշտ էր ներկայացնել առաջարկվող՝ համարժեք բնութագրեր, բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն.

«Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 27.04.2021թ.-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Նույն կարգի 42-րդ կետի համաձայն.

«Եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է»:

Քանի որ Մասնակիցը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ սահմանված ժամկետում շտկում չի ներկայացրել, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.05.2021թ. կայացած նիստում Մասնակցի հայտը գնահատել է անբավարար (անհամապատասխան) Ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել վերջինիս հայտը Ընթացակարգի 12-րդ չափաբաժնով:

Կից ներկայացվում է Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/125 ընթացակարգի շրջանակներում 18.05.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/125 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/125 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝

Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ով ներկայացված 12-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի տեխնիկական բնութագրերում նշված է՝ «Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք» տեղեկատվությունը, որը չի հստակեցնում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, որն անհրաժեշտ էր հստակեցնել՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը կամ անհրաժեշտ էր ներկայացնել առաջարկվող համարժեք չափանիշը՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, 27.04.2021թ. որոշում է կայացրել նույն օրը armeps համակարգի միջոցով ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 27.04.2021թ. armeps էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (հետայսու նաև՝ Համակարգ) միջոցով Ընկերությանը ծանուցել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ՝ հայտնելով հետևյալը. ««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 2-րդ բաժնով նախատեսված և Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ձեր կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 12-րդ չափաբաժնով ատաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում նշված է՝ «Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք» տեղեկատվությունը, որը չի հստակեցնում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, որն անհրաժեշտ է հստակեցնել՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը կամ

անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող համարժեք չափանիշը՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը, ներկայացնել շտկված ամբողջական նկարագիր...»:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.05.2021թ. կայացած նիստում արձանագրել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը և որոշում է կայացրել, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.05.2021թ. թիվ 26/26-1/7398-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.05.2021թ. թիվ ՊՆ/02/2440-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: ***Ապրանքների գնման***

դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ով ներկայացված 12-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի տեխնիկական բնութագրերում նշված է՝ «Uni-

ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք» տեղեկատվությունը, որը չի հստակեցնում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, որն անհրաժեշտ էր հստակեցնել՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը կամ անհրաժեշտ էր ներկայացնել առաջարկվող համարժեք չափանիշը՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, 27.01.2021թ. որոշում է կայացրել նույն օրը armeps համակարգի միջոցով ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 27.04.2021թ. Համակարգի միջոցով Ընկերությանը ծանուցել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ՝ հայտնելով հետևյալը. ««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 2-րդ բաժնով նախատեսված և Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ձեր կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 12-րդ չափաբաժնով ատաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում նշված է՝ «Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք» տեղեկատվությունը, որը չի հստակեցնում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, որն անհրաժեշտ է հստակեցնել՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը կամ անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող համարժեք չափանիշը՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը, ներկայացնել շտկված ամբողջական նկարագիր...»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.05.2021թ. կայացած նիստում արձանագրել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը և որոշում է կայացրել, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, 12-րդ չափաբաժնով նախատեսվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը (հետայսու՝ Տեխնիկական բնութագիր)՝

Հ/հ	Գնման առարկա	Տեխնիկական բնութագրերը
12	Ինքնահոս գրիչ՝ Գրիչ գելային բարձրորակ	Կապույտ, սև և կարմիր միջուկով (համապատասխանաբար 60%, 30%, 10% քանակային համամասնությամբ), բարձրորակ (***Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք***), պատրաստված Airpiane-safe տեխնոլոգիայով, առանց շարժման մեխանիզմի, կափարիչով՝ արծաթագույն կամ սև ամրակով, կափարիչի գլխամասը՝ կոնաձև, թանաքի գույնը նշող պլաստիկից ներդիրով: Իրանը՝ սպիտակ կամ մոխրագույն, արծաթափայլ: Միջուկի ծայրի տրամագիծը՝ 0.8մմ կամ 1.0մմ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ 12-րդ չափաբաժնի մասով, հետևյալ տեսքով՝

Հ/հ	Առաջակվող ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագրերը
12	Ինքնահոս գրիչ՝ Գրիչ գելային բարձրորակ	Կապույտ, սև և կարմիր միջուկով (համապատասխանաբար 60%, 30%, 10% քանակային համամասնությամբ), բարձրորակ (***Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք***), պատրաստված Airpiane-safe տեխնոլոգիայով, առանց շարժման մեխանիզմի, կափարիչով՝ արծաթագույն կամ սև ամրակով, կափարիչի գլխամասը՝ կոնաձև, թանաքի գույնը նշող պլաստիկից ներդիրով: Իրանը՝ սպիտակ կամ մոխրագույն, արծաթափայլ: Միջուկի ծայրի տրամագիծը՝ 0.8մմ կամ 1.0մմ:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում ***մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Գործով առկա փաստական հանգամանքները համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն, ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում չի շտկել՝ խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որն էլ իր հերթին հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի

1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Անդրադառնալով Ընկերության կողմից դիրքորոշմամբ ներկայացված հետևյալ դիտարկմանը. *«Արձանագրելով, որ ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին, և միևնույն ժամանակ հստակ չնշելով. թե ինչով չի համապատասխանում, գնահատող հանձնաժողովը մի կողմից խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, իսկ մյուս կողմից Կարգի 41-րդ և 43-րդ կետի պահանջները»*, ապա հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ</u>՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: <u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Ընդ որում՝ Կարգի 43-րդ կետով սահմանվում է, որ հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի ***<u>արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը</u>***:

Վերոգրյալ իրավական կարգավորումների մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում

եմ, որ տվյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պահպանվել են Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 41-րդ և 43-րդ կետերով սահմանված իմպերատիվ դրույթները, այն է՝ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, արձանագրելով անհամապատասխանություն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության և Ընկերությանն 27.04.2021թ. armeps համակարգի միջոցով ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվել են հայտնաբերված անհամապատասխանությունները, այն է՝ «*ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-8/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 2-րդ բաժնով նախատեսված և Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ձեր կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 12-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում նշված է՝* ***«Uni-ball UB-200(08) կամ Uni-ball GEL IMPACT UM-153S կամ համարժեք» տեղեկատվությունը, որը չի հստակեցնում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը*** *և չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, որն* ***անհրաժեշտ է հստակեցնել՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը կամ անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող համարժեք չափանիշը՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը, ներկայացնել շտկված ամբողջական նկարագիր...****»:*

Այսպիսով՝ վերը նշվածից պարզ է դառնում, որ Ընկերությունը հայտով ներկայացված Հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, բնութագրել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և միևնույն ժամանակ նշել է «կամ համարժեք» բառը, այսինքն՝ հստակ չի նշել իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, մինչդեռ՝ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը*** հայտով ***ներկայացնում է*** ապրանքների գնման դեպքում ***իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը***..., որպիսի պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հնարավորություն կունենա գնահատելու Ընկերության կողմից առաջարկվելիք ապրանքի տեխնիկական բնութագրի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին համարժեքության համապատասխանությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.05.2021թ. թիվ 26/26-1/7398-2021 գրությամբ «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՄԻԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**